ՆՈՐ-ԴԱՐ

№ 151 ՏԱՍՆՕՐՅԱՑԻ ՏԱՐԻ Հինգշաբթի 4 Սեպտեմբերի 1897 Հինգշաբթի 4 Սեպտեմբերի ՏԱՍՆՕՐՅԱՑԻ ՏԱՐԻ № 151

Տարեկան 10 բուբլի, վեց ամիսը՝ 6 բուբլի, երեք ամիսը՝ 3 բ. 50 կ. ամիսը՝ 1 բ., հատով 5 կ. Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 3-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են տեղն լրագիրով Յայտարարութիւնների գառն 3 կ., տեղլամների համար կրկնապատիկ։

ՕՐ. Ե. ՅՈՎՀԱՆՋԱՆԵԱՆԻ

ՄԱՍՆԱՒՈՐ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

գտնւում է Սադովայա և Վ. Եւեւաւիևովսկայա փողոցների անկիւնի, ՕՀԱՆԵԱՆԻ տանը—№ 38.

Ընդունւում են ԵՐԿՈՒ ՄԵՌԻ մանուկներ և պատրաստւում Գիմնազիոններ, Րէալական և այլ Պետական դպրոցներ մտնելու համար։

Ընդունելութիւնը ամեն այն օր.

(807) 4—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։
Շուչին ակամայ քաղաք։
Թղթակցութիւններ.—Սըզնախ։
Քաղաքական.—Թիւրքիա և Ռուսաստան։ Գերմանիա և Իտալիա։
Խառն լուրեր։
Հեռագրներ։
«Նոր-Դար»-ի պատասխաններ։
Բանաստեղծական.— Սուլթանը և պետութիւնները։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ

ՔՐՈՆԻԿՈՆ

«Օդ. Նով.» Թերթի ասելով, Օդեսայի հայ գաղութը մտադիր է մի առանձին պատգամաւորութիւն ուղարկել ս. Էջմիածին միւռոն օրհնութեանը ներկայ լինելու։

—

Մտադրութիւն կայ Պետերբուրգում կովկասեան հնութիւնների ցուցահանդէս բանալու։

—

Մօտ ժամանակներս էականապէս փոփոխութեան են ենթարկուելու և դիւրացնուելու այն առևտրական, պաստային և հեռագրական կարգերը, որ ներկայումս գոյութիւն ունին։

—

Սոյն թուի Դեկտեմբեր ամսին Թիֆլիս են ժողովուելու Անդրկովկասեան բոլոր Նահանգապետները աւագակութեանց առաջն առնելու համար միջոցներ ձեռնարկելու։

—

Նրևանի և Դանձակի նահանգներում կատարուող աւազակութեանց առաջն առնելու համար ոստիկանութիւնը կարգադրել է այդ նահանգներում եղած խճուղիների վրայ կազակների փոքրիկ խմբեր կանգնեցնել և գիւղացիներից պահապաններ նշանակել։

—

Երկրաբանների միջազգային համագումար ժողովին մասնակցող անդամները օգոստոսի 30-ից սկսած 20—40 հոգուց բաղկացած խմբերով ժամանում են Թիֆլիս։

Երկրաբանների վերջին խումբը ըստպատում է քաղաքումս սեպտեմբերի 7-ին։

—

Թէոդոսիայի քաղաքային խորհուրդն որոշել է քաղաքի կողմից մասնակցել հայազգի նկարիչ Ե. Այվազովսկու 60-ամեայ գործունէութեան յոբելեանի հանդէսներին։ Յոբելեարին ներկայացուելու է մի ուղերձ և քաղաքային դահլիճում մի հանդիսաւոր ճաշկերոյթ է սարքուելու։

—

Սեպտեմբերի 1-ին Թիֆլիս ժամանեց և իջևանեց «Լոնդոն» հիւրանոցում XII բժշկական համագումարի անդամներից գերմանացի դոքտոր Ֆերդ Մաասկի։

—

Բժշկական XII համագումար ժողովից Թիֆլիս վերադարձած օտարերկրացի բժիշկները վերլուծութեան համար իրենց հետ վերցրել են Թիֆլիսի հանքային բաղանիքների ջրից։

—

Մոսկուայի համալսարանն այս տարի, տեղական թերթերի ասելով, մտել են 1,111 հոգի, որոնք ըստ մասնաճիւղերի բաժանուած են հետևեալ կերպով. ի բուաբանական—առաջին կուրսի համար 431, բարձր կուրսերի համար 7, բնական գիտութեանց—231, բժշկական—առաջին կուրսի համար 211, բարձր կուրսերի համար 26, մաթեմատիկական—168 և լեզուաբանական—55 հոգի։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը իմկատի ունենալով, որ 2 հատ քաղաքային բուժարանները չեն կարողանում բաւականացնել երթևեկ բազմաթիւ հիւանդներին, երէկ, սեպտեմբերի 2-ին, խնդրամատոյց է եղել պ. Նահանգապետին Կուկիայում ևս մի այդպիսի բուժարան բանալ։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը երէկ, սեպտեմբերի 2-ին, սկսեց առաջիկայ տարուան համար քաղաքի նախահաշիւը կազմել։

—

Սեպտեմբերի 2-ին, գիշերը, Ռազմավիրակաւ տրակտի վրայ Անանաուր և Փասանաուր կայարանների միջև, առաջինից 9 վերստ հեռաւորութեան վրայ, ճանապարհը խանգարուել է։ Թեթև պոստը անց են կացրել ձեռքերի վրայ, իսկ ծանր պոստը մնացած է Փասանաուր կայարանում։

—

Հետևեալ յանդուգն գողութիւնն է տեղի ունեցել Բաթումի երկաթուղու կայարանում։ Դնդապետ Դիատոլովիչը օգոստոսի 31-ին գիշերուան մարդատար գնացքով ժամանելով այդ կայարանը, № 2 բեռնակիր մշակի պահպանութեանն է յանձնում իւր 6 ծրար իրերը։ 4 ժամից յետոյ յիշեալ գնդապետը երբ վերադառնում է իւր իրերը ստանալու, նկատում է որ նրանցից մի կտորը չկայ։ Նրա զննուցման համաձայն, կորած ծրարի մէջ եղել են 12,000 բուբլու արժէքաւոր և զանազան պաշտօնական թղթեր։ Այդ գողութեան առթիւ քննութիւնը կատարւում է պրոկուրորի օգնականի վերահայեցողութեամբ։

—

Բազում էլ պատրաստութիւններ են տեսնւում երկրաբաններին ընդունելու և քաղաքի կողմից մի ճաշով պատուելու համար։ Այդ նպատակին յատկացրուած է 6000 բուբլի։

—

Լրագրները հաղորդում են, որ Պետերբուրգի նահանգական զեմստվոյն խնդիր է յարուցել, որ իրեն էլ տրուին այն իրաւունքները, որ յատկացուած են աղնուականութեանը։

—

Սեպտեմբերի 1-ից սկսած Թիֆլիսի արքունական պալատում պարապմունքները լինում են առաւօտեան ժամը 9-ից մինչև ցերեկուայ ժամը 2 ը։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԴԱՆՁԱԳԻՒ (Ախալքալաքի գաւառ).— Բաւական ժամանակ էր, որ այստեղից յայտնի աւազակների հետքերը վերջացել էին։ Այսօր, օգոստոսի 25-ին, երեկոյեան Դանձայի բնակիչ մի հայ երիտասարդ, քաղաքից վերադառնում է գիւղ։ Ճանապարհին նրան պատահում են աւազակները, որոնք իրենց ձիանեերով նստած են եղել ճանապարհից քիչ հեռու հնձած ցորենի կոյտերի վրայ։ Երիտասարդը երկիւղ կրելով նրանցից, առանց բան ասելու, մտրակում է ձիուն, որ առաջ անցնի. և մինչդեռ նա մի քանի քայլ է անում յոգնած ձիով, աւազակներն արդէն նստում են իրենց ձիերի վրայ։ Երիտասարդը մտածելով, որ անպատճառ կբռնեն իրեն, հանում է գրպանից փողի քսակը, որի մէջ լինում է մօտ 200 բուբլի, այդ դումարը կոխում է կօշիկի մէջ, և քսակի մէջ թողնելով միայն մի քանի սև փող նրից գրպանն է դնում։

ԲԱՆԱՍՏԵՂԱԿԱՆ

ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ [1])

Մալթօլմ Մակ-Քօլլի
(Ռիպոնի-Կանոնիկոսի)

ԳԼՈՒԽ VI

ԼՈՐԴ ՍՈԼՍԲԸՐԻԻ ՀԱՅՏՆԱԳՐՆԵՐԸ

Որոշումն և միտք Գլադստոնի ճառը (1895 թ.) յօգուտ Դանուբեան իշխանութիւնների միացման. լորդ Սոլսբըրիի պաշպանութիւնը և միտք Դիզրայէլիի ու լորդ Գալմերստոնի ընդդիմադրութիւնը։ Ռումինեան քանդեց եւրոպական համերաշխութեան ծրագրները։—Լորդ Սոլսբըրիի Արեւելեան խնդրի մասին ունեցած կարծիքները 1877—78 թուերին։—Լորդ Սոլսբըրիի քաղաքականութիւնը. Ե՞ր ինչու համար նա անաջողութիւն կրեց։—Լորդ Բիկոնֆիլդի քաղաքականութիւնը 1877 թ. Ե՞ր ինչու համար նա պարտութիւն կրեց։ Լորդ Սոլսբըրին և Ռուսիան։

1858 թ. մայիսի 4-ին (այդ ժամանակ լորդ Դերբին Գրեմիեր էր, իսկ միստր Դիզրայէլին Պատգամաւորների ժողովի գլուխը) միստր Գլադստոնը բաց արեց մեծ հակաճառութիւնները այն ժամանակ Թիւրքիայի գերիշխանութեան ներքոյ գտնուած այն երկու իշխանութեանց միացման հարցի մասին, որոնք այժմ կազմում են ռումինական թագաւորութիւնը։ Նրանց միացնելու խընդիրը ներկայացուեցաւ 1856 թ. Պարիզի կոնգրեսին։ Ֆրանսիայի և Անգլիայի լիազօրները խիստ պաշտպանութիւն ցոյց տուին այդ հարցին, և նրանց քաղաքական հայեացքները մըտցուեցան Պարիզի դաշնագրի քսան և ութերորդ յօդուածում հետևեալ բառերով.

«Նորին մեծութիւն սուլթանը խոստանում է երկու իշխանութիւններից ամեն մէկում անմիջապէս ad hoc բարձրագոյն խորհուրդ (դիւան) գումարել, որը պիտի կազմակերպուած լինի այնպէս, որ նրա մէջ ներկայացրած լինին հասարակութեան բոլոր դասակարգերի հնարաւոր եղածին չափ լիակատար չափերը։ Այդ դիւանները պիտի գումարուեն իշխանութիւնները վերջնականապէս կազմակերպելու առթիւ ժողովրդի ցանկութիւնն արտայայտելու համար»։

Աւստրիան և Թիւրքիան - Arcades ambo, որպէս ազատութեան թշնամիները—հակառակում էին այդ միութեանը և երբ կոչ ուղղուեցաւ մոլոտաւ ժողովրդին, նրանք խեղդեցին ժողովրդի կամքը ամենաանամօթ կերպով վախեցնելով նրան։ Անգլիան պահանջեց, որ այդ ընտրութիւնները մերժուեն և մի նոր կոչ անուէր ժողովրդին. Աւստրիան և Թիւրքիան, ի հարկէ, հակառակեցին դրան, սակայն անաջող։ Երկրորդ ընտրութիւնների ժամանակ ժողովուրդը միաձայնութեամբ քուէարկեց յօգուտ միացման։ Աւստրիան և Թիւրքիան նորից հակառակութիւն ցոյց տուին, և այդպիսով այդ խնդիրը քննելու համար Պարիզում տեղի ունեցաւ երկրորդ կոնգրեսը։ Մինչ կոնգրեսի նիստերը շարունակում էին, միստր Գլադստոնը պատգամաւորների ժողովին առաջարկեց յօգուտ միացման մի որոշում։ Նրա վերին աստիճանի ճարտար ճառը, իւր մէջ արտայայտած քաղաքական թափանցող հայացքների պատճառով խիստ արժան է կարդալ և այժմ։ Հասկացնելով, որ «մահմեդական պետութիւնը երկար ժամանակ չի կարող շարունակել իւր գոյութիւնը Եւրոպայում», նա խորհուրդ էր տալիս չնորհել նրա հպատակ քրիստոնեայ ժողովրդին պետութեանց պաշտպանութեան ներքոյ մի իրական ինքնավարութիւն, սակայն Դանուբեան իշխանութիւնները թողնելով Թրան կառավարութեան ներքոյ, և այդպիսով հնարաւոր եղածին չափ երկար ժամանակով պահպանել «Թիւրքիայի հողերի անձեռնմխելիութիւնը», որպէսզի իշխանաէը զրացիների կողմից արշաւանք չլինի, որը կարող էր մեծ պատերազմ յառաջացնել։ Նա չզարմացաւ, որ Աւստրիան միացաւ Թիւրքիայի հետ՝ Դանուբեան իշխանութեանց միութիւնը խանգարելու համար։

«Ես չեմ սկսիլ ապացուցանել, թէ Աւստրիային յարմար է ազատութեան գրացիութիւնը բարօրութեան հետ միասին. սակայն դա նրա մեղն է, և ոչ թէ իմս։ Թիւրքիան կը չարունակի իւր գոյութիւնը, այդ իշխանութիւնները նրա կառավարութեանը հպատակ կըլինին, իսկ երբ Թիւրքիան կընկնի—որը վաղ թէ ուշ պիտի լինի,—նրանք աւար կըգնան այդ կայսրութեան մնացորդները իրենց մէջ բաժանող մի քանի պետութեանց։ Նա յուսով էր, որ Պատգամաւորների ժողովը այդ դէպքում ազատութեան պաշտպան կըհանդիսանայ։ Այդ ժողովը քիչ չանքեր չէ գործ դրել, և շատ է խոսուել նրանում իւր նուիրական սկզբունքները տարածելու և միւս պետութեանց մէջ ինստիտուտներ բազմացնելու մասին, որոնց առաջ նա խոնարհուել է։

«...Այժմ յարմար առիթ է հանդիսանում,—որը գուցէ այլ ևս երբէք չի կրկնուիլ,—ընդունելու այն սկզբունքները, որոնց առաջ մենք ակնածում ենք սահմանել այդ ինստիտուտները, որոնց մենք պարտական ենք մեր սեպհական բարօրութեան համար, և ապա-

Մխսը Գլադստոնին պաշտպանեց լորդ Ռոսբելը իւր վայելուչ և ազդու ճառով։ Նրա դէմ կատաղի թշնամի հանդիսացան կառավարութիւնը և լորդ Պալմերստոնը, որը իւր խիստ ճառի մէջ պնդում էր թէ իշխանութիւնները չըցանկացան միանալ։ Այդ բոլորը արհեստական յուզմունք էր, որ չար նպատակներով նախապատրաստել էին «օտարերկրեայ խորդուբորդաւանողները»։ Անցկացրէք միստր Գլադստոնի քաղաքական հայեացքները, և «Ռուսիան վայրկենաբար կըյարձակուի» Ռումինիայի վրայ, որը այդպիսով խառնակութեանց և խարդաւանքների մի վայր կը դառնայ և, Լեհաստանի նման, «կուլ կը գնայ Ռուսիային կամ կը բաժանուի նրա և Աւստրիայի միջև»։ Բայց մի բան, որ ամենից աւելի կարևոր է, այդ այն է, որ միստր Գլադստոնի քաղաքականութիւնը «Թիւրքաց կայսրութեան անկախութեան և անձեռնմխելիութեան» վերաբերմամբ օրհասական ազդեցութիւն կունենայ։ Դրանից երեք տարի առաջ, լորդ Պալմերստոնը յայտարարել էր, որ իւր սեպհական քաղաքականութիւնը նպատակ ունէր «ազատել իշխանութիւնները օտարերկրեայ միջամտութիւնից և աւելի սերտ կապերով հպատակեցնել նրանց սուլթանին»։

Հակաճառութիւնները նշանաւոր էին ոչ թէ միայն պարլամենտի ամենահին ատենաբանների ճարտասանութեան, այլ և մի փառաւոր ճառի շնորհիւ, որ միստր Գլադստոնի առաջարկութիւնը պաշտպանելու համար արտասանեց պահ-

Ուստի ես ուզում եմ ասել, որ ամեն մի ազգ ունի իր ուրույն հատկությունները, որոնք նրան տալիս են իրեն միայն հատուկ գույներ, ձևեր, ոճ և ոգի, որոնք ազգերի ընդհանուր գանձարանի համար ունեն մեծ արժեք։ Ուրեմն ամեն ազգ պարտավոր է պահպանել իր ազգային հատկությունները, որպեսզի նրանք չկորչեն, չխառնվեն ուրիշների հետ և չանհետանան։ Ամեն ազգ պարտավոր է ապրել իր կյանքով, զարգացնել իր ազգային ուժերը, որպեսզի նրանք ծաղկեն և պտուղ տան։ Ամեն ազգ պարտավոր է ունենալ իր գրականությունը, որ արտահայտի նրա հոգին, նրա ոգին, նրա ձգտումները, նրա ցանկությունները, նրա ուրախությունները և նրա վշտերը։ Ամեն ազգ պարտավոր է ունենալ իր գրականությունը, որ ներշնչվի ազգային ոգուց և ազգային կյանքից

ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԹԵՐԹ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ամսագիր

Հրատարակութեան տարեկան պայմանները՝

Ամբողջ տարուայ համար . . . . . 4 ռուբլի
Կէս տարուայ համար . . . . . 2 ռուբլի
Երեք ամսուայ համար . . . . . 1 ռուբլի

Ամսագիրը կը հրատարակուի ամէն ամսուայ 1-ին։

Հրատարակութեան գինը՝ 20 կոպէկ։

Ամսագրի խմբագրութիւնը կը գտնուի Թիֆլիս, Ալեքսանդրեան փողոց, № 3։

Ամսագրի խմբագրութեան հասցէն՝

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս Բագուից դէպի Թիֆլիս օրուայ 4 ժամ և 1 րոպ. Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 0 րոպէ։ Դուրս է գնում Թիֆլիսից դէպի Բաթում առաւօտեան 9 ժամ և 15 րոպ. Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 48 րոպէ։

Մարդատար № 9 գնացքը դուրս է գալիս Բագուից դէպի Թիֆլիս գիշերուայ 12 ժամ և 6 րոպ. Թիֆլիս է հասնում երեկոյեան 7 ժամ և 10 րոպ. Դուրս է գնում Թիֆլիսից դէպի Բաթում երեկոյեան 7 ժամ 55 րոպ. Բաթում է։ հասնում առաւօտեան 8 ժամ 45 րոպ.։

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս Բաթումից դէպի Թիֆլիս առաւօտեան 7 ժամ 45 րոպ. Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 34 րոպ.։ Թիֆլիսից դէպի Բագու է դուրս գնում երեկոյեան 9 ժամ 34 րոպ. և Բագու է հասնում օրուայ 1 ժամ 2 րոպ.։

Մարդատար № 4 գնացքը Բաթումից դուրս է գալիս դէպի Թիֆլիս երեկոյեան 8 ժամ 35 րոպ. Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ 11 րոպ.։ Թիֆլիսից դուրս է գալիս դէպի Բագու առաւօտեան 11 ժամին և Բագու է հասնում առաւօտեան 6 ժամին։

ՊՈՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ ԵՐԹԵԻԿՈՒԹԻՒՆ ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ՃԱ ՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՑ, ՍԿՍԱԾ ՄԱՅԻՍԻ ՄԷԿԻՑ ՄԻՆՉԵՒ *1897* ԹՈՒԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ ՄԷԿԸ։

—

Թիֆլիսից։—5 տեղ ունեցող կառքը առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում և հասնում է Վլադիկաւկազ յաջորդ օրը, երեկոյեան ժամը 7 ին։ Դարձեալ 5 տեղ ունեցող կառքը առաւօտեան 10 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում և յաջորդ օրը երեկոյեան 9 ժամ 10 րոպէին հասնում է Վլադիկաւկ. 6 ունեցող կառքերը (առանց գիշերելու) դուրս են գալիս առաւօտեան ժամը 7-ին և երեկոյեան ժամը 3-ին և յաջորդ օրը հասնում են Վլադիկաւկազ—առաջինը առաւօտեան 9 ժամին, իսկ երկրորդը երեկոյեան 5 ժամ 20 րոպ.։

Վլադիկաւկազից։—հինգ տեղ ունեցող կառքերը դուրս են գնում առաւօտեան ժամը 7-ին (գիշերում է Մլէթում) արձեալ առաւօտեան ժամը 9-ին (գիշերում է Դուդաուր կայարանում)։ Թիֆլիս են հասնում յաջորդ օրը երեկոյեան 7 ժամ 25 րոպ. և դարձեալ երեկոյեան 8 ժամ 15 րոպէին։

Վեց տեղ ունեցող կառքերը (առանց գիշերելու) դուրս են գնում առաւօտեան 8 և երեկոյեան 7 ժամին և յաջորդ օրը հասնում են Թիֆլիս—առաջինը առաւօտեան 8 ժամ 15 րոպ. և երրորդը երեկոյեան 8 ժամին։

Յ ԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՈԿՈԼԱԴ

Совершенно

БЕЗЪ ВСЯКИХЪ ПРИМѢСЕЙ

Избѣгать поддѣлокъ

С. СІУ и К°

МОСКВА.

(М.) 52—34

Մ. ՄՈՒՐՏԱԴԸ

Այս օրերս կլսկսի ԱՆԴԼԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ դասերը Լ.ւր բնակարանում,—Մադաթովսկայա, տուն Գ. Մարտիրոսեանի։ Կարելի է տեսնել ժամը 3-ի մօտերը։

(816) 5—1

ԳՈԼԼԵՆՓԵՐԻ

ԿՈՇԿՈՃԻ (ՄԱԶՈԼԻ) ՀԵՂՈՒԿ

Ոչնչացնում է կոշկոճը և ականջները։

ՍՐՈՒՑԿԻ ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

2 օրուակը պոստով Եւրոպական Ռուսիայում ուղարկւում է ՄԷԿ ՐՈՒԲԼԻՈՎ։

Կարելի է ստանալ Կայսրութեան դեղատնային և պարֆիւմերային բոլոր խանութներում.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏԸ

Лабораторія І. Голлендеръ.

С. ПЕТЕРБУРГЪ.

Демидовъ пер. д. № 1.

(М.) 30326. 10—7

ԿԱՐ ՈՒ ՁԵԻ ՎԱՐԾՈՒՀԻ

Աւարտել եմ Տիկ. Թեոֆիլոփայի կար ու ձեի դպրոցը **ԱՏԵՄՏՅԱՆՈՎ**, և ցանկանում եմ ունենալ աշակերտուհիներ։

Ուսուցման շրջանը **ՎԵՑ ԱՄԻՍ** է լինելու, և արժէ միմիայն **15 ՐՈՒԲԼԻ**

Հասցէն Զուգուրէթի. Վոդոպադհօմնայա փողոց. տուն Յարիբէկովի, № 15 20—11

ԱՄԵՆԱՑՑԵՑՆԻ ԴՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

ԹՈՒԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

Ֆիսհարմոնիումներ ջութակներ Քառ-կիններ, ֆլէյտներ, կլարնետներ, ծայնախզներ, լարեր եւ այլն եւ այլն

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս առ մաս,

Ն. Ո. -ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՑ ՝ԵՐԸ

ՈՒՂԱՐԿՈՒՄ ՆՆ 2ՐՒ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՈՐԾԻՆԵՐԻ ԵՒ ՀԱՒԱՍՆԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԵԴԵՐՆԱԿԱՆ

ԴԵՊՈ

Ֆ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

МУЗЫКАЛЬНОЕ ДЕПО

Б. М. МИРИМАНЯНЪ

ТИФЛИСЪ, ДВОРЦОВАЯ УЛ.

739 30—18

Լոյս տեսաւ եւ վաճառւում է

ՍՏԵՆԼԻ ՆՐԱ ԿԵԱՆՔԸ, ԳՒՒՏԵՐԸ ԵՒ

ՎԵՐՋԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.,

Միանգամից 50 օրինակ և աւելի մեծ բանակութեամբ գնողներին 25 զիջումն կըլինի։ Պահեստից գնողները ճանապարհածախք չեն վճարու

Հասցէն՝ БАЛАХАНИ, Исаку Мирза-Авакову:

(815) 10—3

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ

ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

(Սոլոլակ, Սադովայա փող. տուն Մելիքսէթեանի, № 46) Երեխանե ընդունելութիւնը սկսւում է օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սեպտ բերի մէկից։

(806) 10—

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՌՕՍՍԻԱ“

Բարձրագոյն հաստատուած 1881 թուին

Ս.-Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 25.500,000 ՐՈՒԲԼԻ

Ընկերութիւնն ընդունում է։

ԿԵՆԴԱՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսինքն դրամագլխի և եկամտի ապահովութիւն ընտանիքի համար, կամ ծերութեան ժամանակ, օժիտ աղջկերանց համար, ատիպենդիա երեխաների համար և այլն. առանձին չահաւէտ պայմաններով. ապահովագրողները մասնակցում են ընկ. օգտին։

Մա. 1-ն յունուարի 1896 թ. «ՌՕՍՍԻԱ» ընկերութիւնը ապահովագրած ունի 35.563 անձ,—91.406,948 րուբլի գումար։

ԴԱՐԱՒՈՐ ԴԷՊՔԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

.ինչպէս առանձին անհատների նոյնպէս և հաւաքական անձանց, այն է—գործարաններում ծառայողների, բանուորների և այլն նաւագնացած վճարներով չնորհիւ դիվիդենդի, որը վճարներից դուրս էհաշւում։

ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կայքերի (շինութիւնների, մեքենաների, ապրանքի, կահ-կարասիքի և այլն)։

ԱՊՐԱՆՔԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային և ծովային. նաւերի ապահովագրութիւն

Ապահովագրութիւն ընդունւում է Ս.-Պետերբուրգում (Большая Морская, соб. д. № 37.) Թիֆլիսում Սերգիեւսկի փողոց, № 6, և զանազան քաղաքների գործակալութիւններում։

Նոյնպէս կարելի է ստանալ ապահովագրական տոմսակներ դժբախտ դէպքերից, երկաթուղով կամ չոգենաւով ճանապարհորդած ժամանակ, երկաթուղային կայարաններում և ծովամատոյցներում։

(669) 52—47

ՄՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆԻ

Ընդունում է երեւելի, կիսամոշակաւոր և գիշերօթիկ աշակերտներ։ Պատրաստում է Գեմնազիաների, Գաղետների Կօրպուսի, Զեմլէմէրների, Րէալական եւ այլ ուսումնարանների համար։

Փորր պատրաստականում երեխաները լինդունւում են առանց քննութեան, վեց տարեկանից սկսած։ Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումն ստացած մասնագէտները, գիմնազիական ուսուցիչները։ Աւանդելի առարկաներն են, կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, (ռուսաց և ընդհանուր) բնական գիտութիւն, նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն։

Օտար երէցներէն համար նաև ամենայն պէտք յարմարութիւններ։

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Гановская ул., № 11. 3 րդ գիմնազիայի մօտ։

(817) 10—1

Մ. Ի. ԱԼԱՄԱԶԵԱՆ-ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ

(որ աւարտել է կանանց քարձրագոյն կուրսերը)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

ՓՈԽԱ ԸՆՈՒՄ Է

Փերեյլանսկայա փողոցի № 14-րդ տուներ։ Երկու երեխաների բնդունելութիւնը ամենայն օր։ Պատրաստում է միջնակարգ դպրոցների ստորին դասարանները մանկու համար։ Պարապմունքները սկսւում են սեպտեմբերի 1-ից,

(810) 10—6

Յակ. Խաչ. Քոչարեանցը

որ ուներ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ

ԵՒ

աշակերտական քնակարան,

եւ վարժ. Օր. Սոփ. Խաչ. Քոչարեանցը

Ընդունում են աշակերտ աշակերտուհիներ և պատրաստում են առարկաներից և օտար լեզուներից։ Միքայէլեան փողոց.—Թէուտովսկայա փող. տ. №33 Նիկողայոսեանցի։

814) 2—2

СЪ 1 НОЯБРЯ 1897 ГОДА

БУДЕТЪ ВЫХОДИТЬ ВЪ Г. КІЕВѢ

ЕЖЕНЕДѢЛЬНАЯ ГАЗЕТА

„РОССІЯ и АЗІЯ“

Подписная цѣна въ годъ безъ доставки и пересылки 5 руб., съ доставкой и пересылкой 6 руб., заграницу 7 руб., на полгода безъ доставки 3 руб., съ доставкой и пересылкой 4 руб., заграницу 5 руб.

КРАТКАЯ ПРОГРАММА ИЗДАНІЯ: I) Передовыя статьи, посвященныя Еврейству, Кавказу, Сибири, Туркестану и русской политикѣ на Востокѣ. 2) Извѣстія съ Востока. 3)Русскіе инородцы (Евреи, Волги, Финляндіи и Крыма). 4) Недѣльная хроника русскихъ окраинъ. 5) Сношенія Россіи съ Востокомъ. 6) Научнолитературный отдѣлъ: повѣсти, романы, стихотворенія, драматическія оригинальныя и переводныя, популярныя изслѣдованія по Еврейству, Кавказу, Сибири, Туркестану и Востоку, ихъ антропологія, переводы древне—восточныхъ произведеній, критика и библіографія и т п

Въ газетѣ принимаютъ участіе лучшіе спеціалисты и знатоки Азіи.

Тодписка принимается отъ иногородныхъ по адресу:

Кіевъ, Университетъ Св. Владиміра. Алексѣю Никалаевичу Грену

3—1 Редакторъ-издатель: Приватъ-доцентъ А. Н. ГРЕНЪ.

Доз. цензурою, Тифлисъ, Сентября 3-го дня, 1897 г. Տպարան Ս. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А.О.Меликъ-Шахназаріанца, Головинскій просп. домъ Рейтера